


Ամբաս Բյուրաս
Խեֆ սգրուքիւն «Փիիհնի»ի
Ալեքսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՅ
Պ. Բ. Ե.
ՏՐ. Բ. Ե. Ե. 45
Վ. Ե. Ե. Ե. Ե. 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ՊԱՆԵՆԻ Է

ՓԻԻԿՆԻԿ

ԱՔՏՍԱՆՄԱՆ
Պ. Բ. Ե.
ՏՐ. Բ. Ե. Ե. 45
Վ. Ե. Ե. Ե. Ե. 8
—
ՎՈՎԿՄ
ՏՐ. Բ. Ե. Ե. Ե. 6

ՇՆԲԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷՆ ԿԸ ԾԱՆՈՒԻ ԷՍՏԸ ՄԷՎ ԴՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

10 ՕԳՈՏՈՍ 1901

ԹԻԻ 10

ԱՆՆՐԱԺԵՅՑ

Թողունք որ մեր արիւնքս Անց-
եալի պատկառելի ներկայացուցիչը
Վ. Ե. Հայրիկ, նոր Լատիներոսացի
մը, սղբագրէ ու եղերթիւնէ Հայրենիքի
գեղատունի աւերակները:

Թողունք որ Կարմիր Սուլթանին
Սեւադուրի պաշտօնեան Օրմանեան,
Գուլ-Գարուի նորոգուած Գաորիար-
դարանին մէջ յաճառի յօրանալ կեան-
քովը Քեռուի արջին, որ իւր ճերմակ
մուշտակին մէջ կը քնանայ սառայցի-
բու ծածկացին տակ: Թողունք որ Ե-
րուսաղեմի դադաղեալ Գահակալը՝ Ս.
տեղերուն պահպանութեան համար
տաշուէ տարի հասցնէ քրճաղբեաց
հերոսներ, որ ձեղունի, աւելի, Ս.
Լոյսի միջադէպերուն մէջէն յաղթա-
կան դուրս ելնեն, ուխտաւորներուն
հիացումը խլելով:

Թողունք որ սպաւորիկն Սիս, թա-
գաղուրկի թագուհի, գեռ նստի լայ իր
դարաւոր այրիութիւնը, Լեռներէ ու

Հեթումներէ կտակուած կիտակործան
տաճարներուն ու պալատներուն գե-
տինը պառկած սիւններուն վրայ, սպա-
սելով որ, կիլիկիոյ վէրքերը գիտցող
ու անոնց բալասանը բերող նոր Ներ-
սես մը դայ բազմի տարիներէ ի վեր
թափուր մտայած Ս. Գահը, սրուն բա-
լարիքը մամուկները շարժած են իրենց
ցանցաստայները:

Թողունք որ կալիպոսի մէջ տախ-
տարթանան մեր համարիւն հարազատ-
ները, փախուին դպրոցները, տառադի-
մայրենի լեզուն, լուէ հայ պատմու-
թիւնը, խեղդուին հայրենիքի բնածին
զգացումները, հակիրճ, քառասուն գա-
րերու հին հսկայ հայութիւնը ձուլուի
համալուրտութեան մէջ:

Թողունք որ Պարսկաստանի մէջ,
գաղթային վերջին հոսանքին վրայ ու
նոր Շահնշահին հայասէր ու լուսամիտ
կառավարութեան բարձր հովանիին
տակ, մեր պարսկահայ տոհմակիցները,
դէթ մենէ շատ աւելի բաղդաւոր, —
քանի որ հոն, այդ գեռ կոյս երկրին
մէջ չ'են դուրս ցցած ազգ. օրէնքը
բռնաբարող տիրանիկներ — նոր նոր

ընկերութիւններ կազմեն, գոյրոցներ
ու թերթեր հիմնեն, ու, այսպէս, հըս-
կայաքայլ յառաջդիմեն անսեսապէս,
մտաւորապէս ու բարոյապէս, շնորհիւ
գլուխներու, որոնց մէջ ըզեզ մը կայ,
ազգին բարիքը խաշեցու և անոյ օգ-
նելու տշամագիր:

Թողունք որ Պուրկարիոյ մէջ, հայ-
կական դազիմականութիւնը, հակառակ
արդէն աննպատ միջավայրին ու ան-
ներող պայմաններուն, որոնց ներքեւ
դատապարտուած է անի կեանքին կռի-
ւը մղելու, ինքզինք տայ ներքին ան-
պէտ ու տաղտուկ ազգող վէճերու, և
չատ քիչ ատեն դոնէ զարգանալու
գէթ անսեսապէս:

Թողունք որ եւրոպեան ու ամե-
րիկեան հայաքնակ կարեւոր կեդրոն-
ներուն մէջ թերթերուն ծնունդին ու
մահը յաշորգեն ցերեկուան ու գիշեր-
ուան հետ:

Թողունք որ խանդակաթ կարօ-
տով շոգենա նետուելով Ամերիկա դի-
մազ կայտառ կորովի երիտասարդները,
հազիւ քանի մ'ամիս նոր աշխարհի
խոշոր Գործարանայ մուխերուն ու շո-
գիններուն մէջ իրենց կուրծքն ու թո-
քերը, մութ խաւերու մէջ ալ իրենց
քսակներն ու արիւնը վրայ տալէ յե-
տոյ, չոր կմախք մը, վերադառնան
Նդիպտոս, կամ եթէ թոյլ տրուի,
հայրենիք, հոս կամ հոն քաշքշելու
քանի մը տարիներ ալ տառապանքի
ու յետոյ... գերեզմանին անդարձակ
ճամբան բռնելու համար...:

Թողունք որ մեր Յեղ. Կուսակ-
ցութիւնները, իւրաքանչիւրն իր ծրա-
դրով, յարատեւեն իրենց գործին մէջ,
երբեմն վանելով ու յաճախ քաշելով
զիրար, Մայր-Վաղափարին շուրջը,
ջանալով, տարիներուն ու գէպքերուն
փորձառութեամբը զինուած, այսու-
հետեւ աւելի գործնական ու օգտակար
ուղիներ բռնելու ուղիներ, որոնք յե-
տոյ գէպ 'ի միւսնոյն կէտը, այն է,
հայրենիքի, այսպէս կամ այնպէս, ա-
զատագրութիւնը կը տանին:

Թողունք որ վերջերս ալ միւս-

ցուի հարցը վերստանայ հրատապ
հանդամանք մը, Ռուսճուզի Երիտա-
սարդ-Հայաստանո — չ'հասկնանք Ե-
րիտասարդ Թուրքիա — կոչուելու ար-
ժանի յանձնախումբ մը կոչեր ցրուէ
ամեն թերթերուն, Յեղ. կուսակցու-
թիւնները գէպ 'ի միացում հրաւիրող
մտանալով հանցեալը:

Թողունք որ վենետիոյ Ս. Ղա-
զարն ալ իր անուհ Հիմնագրին,
Մեծին Միխիթարայ Գործին Երկհարիւր-
ամեակը շքեղօրէն ու ազժանաւայել
կերպով տօնելու նախատարատու-
թիւններն առաջ տանի:

Թողունք որ մեր ամայացած դիւ-
ղերէն բերուած ու կիսափուլ վանքե-
րու խորշերը պատապարտուած որբերը
խնամող ընկերութեանց թիւը բազմա-
նայ ամեն կողմ, ու մեզմանայ կայու-
թիւնը նահատակներու այդ անժա-
ռանգեալ սերնդին, որ ապագայ Հա-
յութիւնը պիտի ըլլայ:

Թողունք որ լաւարաններ տրուին,
ընթերցարաններ բացուին ու դոցուին,
բանախօսութիւններ սկսին ծափերով
ու վերջանան կռիւներով:

Թողունք որ լարախաղայութենէ
դոյացած հատոյթներ — 'ի նպատակի-
չերային գտնութացքի հաստատու-
թեան մը, որ դեռ չ'է հաստատուած —
իւրացուին լարախաղացէ աւելի ճար-
պիկ աճարար ձեռնածուներու կող-
մէն...:


Թողունք որ հայրենիքի թշուառ-
ները տապկուին ամբողջ ամառն արե-
ւին տակ, իրենց կալերուն հատոյթէն
տասանորդ մը վճարելու համար կե-
ղեքոյ կառավարութեան, ուրիշ տասա-
նորդ մ'ալ իրենց մշտական տիրապետ
Քուրտ Պէյին. մինչդեռ մեր Պէյերն ալ
Եւրոպայի հովատուն ամարանցներուն
մէջ քաշեն իրենց արգարի քո՛ւնը...:

Թողունք որ Մեծ Տէրութիւն-
ներն իրենց գիւտադիտական կատա-
կախազերով իրարու ժամանցներ կամ
փորձանքներ ստեղծեն, մինչև որ հայ-
կական հարցը, մակեդոնականին հետ
բերուի դրուի կանոջ սեղանին վրայ:

Շարու.ճակիլի

Հետևեալը նոյնութեամբ կը հրատարակենք, պ. Յօդուածագրին թողլով պատասխանատուութիւնը:

ԼՈՒՍՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ



«Փիւնիկի» Զրգ. թիւով, Աղբք-սանդրիոյ Պօղոսեան Աղգ. երկ. վարժարանի ամսավերջի հարցաքննութեանց առթիւ գրուածին մէջ ակնարկուած է նախկին ուսուցչական խումբը, ըսելով թէ՛ «Միին դաւեր հեռացուցին զիրենք վարժարանէն»:

Այս առթիւ ներեցէք պզտիկ բացատրութիւն մը տալ: Նախ ըսեմ թէ, էպպէս միին դաւեր էին այն ամեն արարքները, որ մեր աչքին առջև գործադրուեցան. որով՝ ամեն խղճամիտ ուսուցիչ ստիպուած պիտի ըլլար հրաժարիլ մեզի պէս, և եթէ երբէք Պատուարժան Թաղ. Խորհուրդը հաճի հրապարակել մեր հրաժարագիրները, վստահ եմ թէ արդոյ հասարակութիւնը պիտի համոզուի որ անոնք մէկ մէկ բողոքի բուն արտայայտութիւններ էին, աչակերտուհիներուն, ուսուցչական խմբին, և Աղգ. երկսեռ վարժարանին ընդհանուր պատուոյն դէմ մեղանշող ուսուցչի մը պաշտպաններուն դէմ:

Յիշեալ ուսուցչին անհանգուրժելի ընթացքը, որով անպատուեց աչակերտուհիներն ու վարժուհիները, և անուանարկեց Աղգ. երկսեռ վարժարանը, միակ պատճառն էր որ ստիպեց բողոքել ուսուցչական խումբը Պատ. Հոգաբարձութեան. որուն վրայ Տիար Հոգաբարձուն իր ստորագրութեամբ իսկ հրաժարեցուց, պարտազանց և ուսուցչական նուիրական պաշտօնին դէմ մեղանշող ուսուցիչը:

Ամիսներ յետոյ Պատ. Թաղ. Խորհուրդը քննեց խնդիրը, լսեց բոլոր ամբաստանութիւնները, ստացաւ շատ մը լրացուցիչ կարևոր տեղեկութիւններ ու վկայութիւններ աչակերտուհիներուն և վարժուհիներուն կողմէն. երկա՛ր, շատ երկա՛ր ժողովներէ յետոյ՝ Պատ. Թաղ. Խորհուրդը ընդունեց որ

եղած ամբաստանութիւնները զրպարտութիւններ չեն, և որովհետև գրական վաստ չկար (?) անոր համար անմեղ արձակելու վճիռ տուաւ... և միայն 10 ոսկի իբր թէ տուգանքի ենթարկեց իր պաշտօնակիցներուն նկատմամբ անպատշաճ լեզու մը գործածած ըլլալուն համար (1). և այս որոշումը գրաւոր կերպով հաղորդելով տեսչութեան առաջարկեց որ վերստին վարժարան ընդունուի յիշեալ անխիղճ ուսուցիչը:

Ի՞նչ կը մնար ընել մեզ, համակերպի՞լ բարձրագոյն հրամանին առջև, ընդունի՞լ մեր ուսուցչական խմբին մէջ, ձեռք ձեռքի տա՞լ անոր՝ որ այնքան վատաբար դրժեց առաջին անգամ իրեն յանձնուած նուիրական պաշտօնին դէմ, թէ պաշտպանել մեր խնամոց ու դատտիրակութեան յանձնուած այն անմեղ աղջիկներուն պատիւը՝ որ նուիրական էր մեզ, վարժարանին ընդհանրապես և նոյն իսկ ուսուցչական խմբին պատիւը ու վարկը. անշուշտ պէտք էր բողոքել տրուած այդ վճուին դէմ, և բողոքեցինք:

Պատուարժան Թաղ. Խորհուրդը և Տիար Հոգաբարձուն չափազանց սխալ լեզան կարծելով թէ իրենց տուած կողմնակալ վճիւր անյապաղ պէտք էր որ ընդունուէր ուսուցչական խմբին կողմէն:

Պէտք է լաւ դիտնան որ Աղբք-սանդրիոյ Աղգ. երկսեռ վարժարանի նախկին հրաժարեալ ուսուցիչները իրենց ստրուկները չեն որ ամեն մէկ անտեղի հրամանի առջև գլուխ ծռեն. անոնք ունին իրենց սկզբունքները, իրենց պաշտօնին գիտակցութիւնը և իրենց խիղճը. անոնք կը բողոքեն իրենց իրաւատուութեան սահմաններուն մէջ

(1) Միկնդեո նոյն Պատ. Խորհուրդը քե Պ. Հոգաբարձուն, կ'որոշէ արտաքին Պ. Պետրոս Շասախցեան պատանին, որ իբր քե անպատշաճ լեզուով բնագրած է ուսուցիչներն ու վարժարանը, քոյլ տուաւ քեմք Ս. Առաջնորդին...

կատարուած զեղծումներուն դէմ. իսկ եթէ իրենց մտնի ընող չըլլայ, կը թուգուն ամեն բան և կուտան իրենց պատճառքանեալ հրաժարականները ու կը հեռանան, գէթ խղճաբախ հասարակութեան և իրենց խղճին առջև պատասխանատու չ'մնալու համար:

Գահիրէ Մ. Չրաքեան

ՊՍՏՃԷՆ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Գերապատիւ

Տ. Յովսէփ Եպ'սկոպոս Այվազեան Բարեխնամ Առաջնորդ և Նախագահ Ազգ. Գաւառական Վարչութեան Եղկպոսի վիճակին.

Գահիրէ

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ազգքանդրիոյ հայ հասարակութեան ստորագրեալ անդամներս պատիւ ունինք ժանուշանել ներկայ հանրագրութիւնը:

Տեղոյս ազգային գործերուն յոյժ աննախանձելի կացութիւնը Ձեր Գերապատուութեան կատարելապէս ծանօթ ըլլալով՝ աւելորդ կը համարինք տրուր մանրամասնութեանց մէջ մտնել:

Յաւաքի է որ իրերուն յայտնի ուղղութիւնը տեղական ազգային ամեն կարգի շահերուն բաւական փաստած է արդէն, իսկ անոր շարունակութիւնը կ'ապառնայ ա'լ աւելի մեծ չափով վտանգել այդ շահերը, և անգարմանելի կերպով սաստկացնել հասարակութեան մէջ տիրող երկպառակութիւններն և գայթակչութիւններն որ յիշեալ ուղղութեան արդիւնքն են: Ազգային Սահմանադրութեան տարրական սկզբունքներուն այս տեղ մինչեւ ցարդ անգործադրելի մնալն՝ ըստ մեր համոզման դիտաւոր պատճառն եղած է այս ամեն ծանր անպատեհութեանց:

Առաջնորդական իշխանութեան արդիւնաւորութիւնն և ժողովրդին շահերուն երաշխաւորութիւնը նոյն օրէնքին կիրառութեան մէջ միայն գտնու-

ելով՝ յայտնի ճշմարտութիւն մ'է որ թէ՛ միայն և թէ՛ միւսին անհրաժեշտ պահանջն է, առանց այլ ևս յապագան գործադրութիւնը այս կարևոր կեդրոնին մէջ այն բացարձակ կանոններուն որ կը դժեն գաւառային վարչութեան մը ամբողջութիւնը կազմող ամեն առտիճանի մարմիններուն գոյութեան պայմանները, իրաւասութեանց սահմանները և անոնց փոխադարձ յարաբերութիւնները, ինչպէս ամեն առաջնորդական վիճակներու մէջ անխտիր տեղի կ'ունենայ: (1)

Հանրային շահերու ապահովութեան միակ հիմ պարտուց և իրաւանց սկզբունքն է որ կը խրախուսէ մեզ թարգման ըլլալ ընդհանուր զգացումներուն և իղձերուն, այս հանդիսաւոր դիմումն ընելով Եղկպոսի հայութեան հոգեւոր գլխուն և վիճակային իշխանութեան իրաւասու և պատասխանատու միակ պետին, յանձին Ձեր Սրբազանութեան, որուն օրինասիրութեան եւ բարեխղճութեան կ'ապաւինինք վստահութեամբ:

Ինչպէս Ձեր Սրբազանութիւնը քաջ կ'ըմբռնէ, տիրող ողբալի կացութեան աղբու եւ միակ գարմանը պիտի ըլլայ, օրէնքին տրամադրած եղանակով՝ համարատուութեան և համարառութեան օգտուէտ սկզբունքին նս:

(1) Սակայն մեր պատմական հայրենակիցները, որ ներկայ հանրագրութիւնն ստորագրած են, կ'երեւի քէ մտնած են վառնալի «Իրաւունք»ին 1899 թուականին 92, 93, եւն. քիւերուն մեջ «Աղեփասնորիոյ գործեր» ճիշդոսով յօդուածին իմաստը, որուն մեջ՝ սալօնի լեզու՝ միջնադարեան աւաստեճութեան մը հովերով ջանցած է փաստել քէ՛ Աղեփասնորիոյ Հայոց թագ. կորհրդարանը (բաղլամկնք բսել կուզէ) պէտք չէ՛ օրփոքել Տանկահայաստանի կամ ուրիշ ազգ. վիճակներու հետ. ապի՛ սեսակ մը Պատրիարխարան, բոլորովին անկախ է, ու եզրայ. կառավարութեան պայտսօնապէս ընդունում: Հիմայ հասկցանք, անո՛ր հաւար սեղիս թագ. կորհուրդին գրագիրը՝ Դիւանապէտ (Chancelier) կ'ստորագրէ պայտսօնականներու օտակ:


Թարիկել ալբալին գաշժերը մատակարարող անգլական զանազան հաստատությունաց գործունեությունը:

Ահա՛ այս փրկարար տնօրինությունն է որուն հաստատությունը կրուպատէ մեծ անհամբերութեամբ, գէթ հիմայ որ վիճակիս ազգային իշխանութիւնն իր օրինաւոր նախագահն ունի, և որուն ամեն բանէ առաջ և կարելի եղածին չափ շատ իրազործուիլը գնահատելի ազգացոյց մը պիտի ըլլայ նաև Ձեր Գերատառուութեան լուսամաս հեղինակութեան և հայրական հոգածութեան:

Հաճեցէք ընդունիլ, Գերատառու Սրբազան Հայր, մեր սրբիական ամենախորին և անձնուէր յաջգանաց հաւատին:

210 Ստրագրոսթիւն

Աղեֆասեղրիս 1730 Մայիս 1901



Սիրելի՛ Լեւոնիկ,

Իմացայ քեզի պատահած ահագին և ահաբեկ կորուստը, տարը երկար տարիներու ընկերակցիդ անէացումը, ընկերակցի, որ քեզի համար ա՛ն եղած էր ինչ որ է ՅՄ բայը՝ բայարմատներու համար. նէ քու լրացուցիչ էր, ու նէ ո՛չ ևս է, ինչպէս պիտի ըսէր եկեղեցական մը:

Բաղդին սահմուկեցուցիչ մէկ հարուածը ձեւ իրարմէ զատեց, և նէ, նախախնամութեան հաւատացեալ արգարութեանը հակասող մէկ տնօրինութեամբը գնաց, սուզեցաւ Միջերկրականի ալետանջ կուրծքին խորքերը փնտռելու իր յաւիտենական հանգիստը. այն Միջերկրականին, որուն եզերքը կը գեգերիս տարիներէ ի վեր, բոյնիկդ գնելու անկիւն մը գտնելու յուսով:

Ղ. Գ ո՛րչափ կը վայլէր իր գեղովը նոյնչափ նշանաւոր էր իր պարզութեամբը. ու ես, սիրելի՛ բարեկամս, իր ներքողեանը չէ՛ որ հոս պիտի կարգամ քեզի, այլ իբր բարեկամ, ու մըտերիմ բարեկամ, կ'զգամ որ պէտք է

փորձեմ՝ քանի մը տարաւոր խօսքերով քեզ մխիթարելու, թէ եւ նոյն խօսքերը շատ անգոր ըլլան քեզ համակամ արամութեան քով:

Ա՛խ, ա՛նի՛ւ Լեւոնիկ, ս՛ւր էր թէ այս տղերը քելի բազելու ստիպուած չ'ըլլայի ու իցի՛ւ թէ քեզ սիսփանք հիւսելու հարկին տակ չ'գտնուէի. ձեռքերս կը գաղբայան, դրելը մատնեղուս վրայ զգալիօրէն կը ճնշէ. ու միտքս կ'ընդլզի, կը գծկամակի քանի մը տղեր շարելու հոս. աչքերս կը փակուին ու այդ մշուշի մէջ, ընկերակցիդ յաւերժհայտի մը պէս կ'անցնի երեւոյցութեանս մէջէն, միշտ նազելի, միշտ պարզ, ու մութին մէջ կ'անհետանայ. սարսուռով մը կը բանամ աչքս և ա՛լ աւելի կ'զգամ կորուստիդ ահագնութիւնը:

Այդ պարզութեան տիպարը, այդ համեստութեան մարմնացումը, ազրատ ծնած, պարզ ու պարկեշտ մեծցած, և իբր ընկեր, սիրեցեալ Լեոն, քեզ համեստիկդ — Բիւրատի վսե կիկներէն շատ տարբեր — ընտրած էր. նէ երբէք ճոխութիւն չ'էր տեսած, շոյչազուն ու ու զարգարուն հագուստ ու կատարուտ չ'էր կրած, երբէք ելեկարիկով լուսազարդեալ աաջօններ չ'էր պարած. իշխաններու հետ չ'էր ասրած և ո՛չ ալ իշխանավայել հարսնիքներ գացած — թո՛ղ որ եթէ այդ պերճանքները վայելած ըլլար քու որտի հատորիկ ընկերակցիդ, մեր Սրբազան Առաջնորդը զիս կանխելով՝ փառաւոր (?) դամբանական մը պերճախօսած կ'ըլլար եկեղեցիին բեմէն:

Լա՛յ ուրեմն, մտերիմս, լա՛յ քու անուշիկ ընկերակցիդ կորուստը, ինչպէս, այսօր, հայ ցեղը կուլայ և կ'ողբայ իր անփոխարինելի, սարսուռզեցիկ կորուստները. բայց մխիթարուէ՛ միանգամայն, մտածելով թէ՛ գոնէ գոն կրնաս քու ընկերակցիդ տեղը՝ ուրիշ մը գտնալ, եթէ ո՛չ բոլորովին անոր յար եւ նման գեղեցկութեամբը, գէթ նոյնչափ պարզ ու համեստ բայց, մտածէ՛ մէյ մը մեր ազգը, որ չ'կրնար

պարպուած տեղերը լեցնել անցած
դէմքերուն: Լա՛յ բարեկամս, լա՛յ ու
տես թէ՛ որո՞նք կը նստին Իզմիրլեանի
Փօսը. եւ որո՞նք իրենց քեթիլ կը
խոթեն Ազաթօնի, Սէրվիչէնի, Օտեանի
ու անոնց պէս ուրիշ հոյակապ գլուխ-
ներու երբեմնի գործերուն մէջ:

Ադէֆս 29 Յուլիս 1901

Քոյդ
Հայկազունի

Մ Ա Հ Ե Ր Գ

“Ն ոյեմի՛ն է, Նոյեմի՛ն, հա՛րսը Գարեանն,
Կը հծծէին սրտում, բերան առ բերան,
Ու քափորը կը հեհեւեր երկիրում՝
Դազադակիր կառփին, ուր կին մ'եր պառ-
կած

Անկեղսան, ո՛չ առագաստին, այլ վերջին
Անկողնին մէջ, գիրկը սառույց Ոչքնչին.
Կառքը դանդաղ կը գրկար,
Բեռն էր բեկբեկ մի իրկար:

Ո՞վ էր կինը, զո՞ն իրնային սարխային.
Նայումսք՝ շին, ուր շէջ աստղեր կուշային.
Երազներ ալ կը շուրջային հօն, ուր սեռ՝
Փոխումս առգի արցունքներու, կը հոսեր.
Երեսախար դե՛ւն էր քանդողը զանի.
Մեկուքեան գիրկը Յընորփին՝ երանի՛
Կ'ըսէր, երկրին ուր չըկան
Խեղդողները խիղճն աղջիան.

Յ ուսարթիս քեւերու մէջ, շնչով ջեր
Մընեղսուք գուրգուրանքին կը հանգչի
Հօրն ու Մօրը կուռքը, պեպէք պաշտումս,
Սիրո՛ղ կոյսը, ու սե՛ր գիտեր իսկ Աստ-
ումս...
Անգո՛ւք պատանք. դա՛նն հեղեղուքին քիրս
բաղդին.
Երեր հոգին՝ Հիւնեմի՛ն անկն աղսաղսին
Ինկա՛ւ, աղեղն էր շարումս,
Մրտի՛ն շեշտումս էր հարումս,

Ե հե՛, ս՞ոյ էր ժպիտը բաղդը հրեշտակին.
Որ հաւան սեռ՝ պիտի վարժեր պարիչ կին,
Թողո՞ւղ Դեղօնն ու դրաստ մ'անցեալ քա-
ղել ողջ,
Խաւրոցին մէջ, իրան Գարեան կեանք
մ'աւերողջ.
Ցաւին տո՛ւնն է փակ, ա՛յ չ'երգեր Եղեմի
Սոխակը, սո՛ւզ է մըսեր, հե՛զ Նոյեմի.
Իր հեծեծակը վերջին
Կը քոչի հեքը շնչին.

“Մ ի՛, մի՛ կարծեք խաղ, երեւոյթ, մի՛
կասակ.

Ա՛յ չ'եմ պարիւր, սիրսու ալ ուս՛ն է կուռ-
ծիս սակ.

Քի՛ջ սարեցայ կեա՛նքը, մեռնի՛մ, ա՛յ հերթի
Դաւեցիք, ո՛վ յոյսեր ու սե՛ր ինձ քերթի.
Օրորոցիս ծոցին միկնել առագաստ,
Մրսախար մը գիս զրգուեց բարեբաստ.
Առագաստին ալ անկին՝
Մոսկո՛ւնը շուռ անդրեղին:

Ի՞նչ, ս՞ոյ էր լոկ...: Հօ՛ն է վանդակը
քափոր

Երգը շուն՛ց, բեկա՛ւ շարը քաղցրալուր.
Մագնիս մասներ, պարիկ ոսկեր, մեղր իրան,
Գանկեր այրող քարք ու կախարդ կերպարան.
Անա՛ բոլոր Նոյեմին: Իսկ դո՛ւ, պրահ՛ս,
Որ շոյ մ'անոր հոսեցուցիր հոգիեդ,
Այս մահերգը՝ մահարձան
Զօնէ՛ անոր անկործան:

1 Օգոս. 1901

Ս. ԲԻԻՐԱՏ

Հեռուեալ նամակը զրկած է խրմ-
բագրութեանս՝ Տեղոյս Հայ. Յեղ.
Դաշնակց. Գօմիթէն.


Յարգելի Խմբագիր.

«Փիւնիկի» վերջին թիւին մէջ,
Դանիէլ Հացագործեան ստորագրու-
թեամբ նամակ մը երեւցաւ, որով Գէ-
որդ Վարդանեան անուն անձի մը երկ-
րին մէջ ՚ի դորժ դրած գաւաճանու-
թիւնները հրապարակուելէ յետոյ, Կօ-
միտէի հասցէին ալ սա որոյ ու վըճ-
ուական մեղանդրանքը կ'ուղղուէր թէ՛
Ադէֆ. Դաշ. Կօմիտէն, յիշեալ անձին
սիրայիր քնդունելուքին մ'ըրած ըլլայ:
Ներկայիս կուգանք յայտարա-
րելու թէ, յիշեալ նամակին մէջ ակ-
նարկուած անձին հետ, Կօմիտէս ուղ-
ղակի թէ անուղղակի ոչ մի յարաբե-
րութիւն չէ ունեցած.

Կը ցաւինք որ յօդուածագիր պա-
րոնը բոլորովին սխալ տեղեկութեան
մը զո՞հ գացած է. այլապէս չ'պիտի
ստանձնէր ձանձրոյթը ուղղելու մեզ
յորդորներու շարք մը, որոնց Կօմիտէս
պէտք չ'ունի բնաւ:
Հ. Յ. Դաշ. Ա. Ե. Բ. Կօմիտէ
Աղեքսանդրիա 5 Օգոստ. 1901

ՔՐՈՆԻԿ

Ա. ԶԳԱՅԻՆ



— Հայ նուագատուաց Խոսերը, միշտ յամառ ու անվհատ, առաջ կը տանի իր գեղեցիկ նպատակին գործադրութիւնը: Տեսնելով որ բարձր անձնաւորութիւնէ մը խնդրուած նպատոր կը գլուցուի վերջապէս, 'ի նիստ կը հրաւիրէ իր անդամները, ինք 'ի մէջէն կը հաւաքէ երաժշտական գործիքները գնելու հարկաւոր գումարը, շատով կ'ապսպրէ 24 նուագարան, թէ և առ այժմ 14-15 նուագածու անդամներէ բաղկանայ:

Ահա՛ փայլուն սպառնայ մ'ալ, զոր ցեղին պատիւ բերող այս աշխոյժ երիտասարդները կուտան. կառնենաչք կառնենայ է, կրօն ֆրանսական առածը: Կը յուսանք թէ քիչ ատենէն կատարեալ կազմակերպութիւն մը պիտի ստանայ նուագածուաց խումբը, շնորհիւ իր անդամներուն գործունէութեան ու կոչովին:

Խաւերը հրուէր կ'ուզէ բոլոր գեղարուեստասէր ու փափագող երիտասարդաց, որ ժամ առաջ անդամակցին, լրացնելու համար 24 թիւը:

Այս առթիւ խաւերը հրատարակու շնորհակալութիւն կը յայտնէ այն ամեն նուիրատու ազգայնոց որանք կը շարունակեն քաջալերել իրենց գրամական նուէրներով ու ամսալճարներով այս նորակազմ խաւերը, որ իրօք արժանի է ամեն գովեստի ու քաջալերանքի:

Յաջողութիւն և յարատեւութիւն:

ՏԵՂԱԿԱՆ

— Հաճախի՞ք փողոցի՞ն արխնայի դէպքը. — Այս շրեքաբլթի կէս օրէն յետոյ ժամը 4ին ստեղծները, թեթեւաբարոյ Իտալուհի մը, քանի մը շիշ կազօչա գնելու իջաւ իր սովորական կազօզավաճառին քով որ բնիկ մ'էր:

Արդէն խիստ տժան այդ ապրանքին գնով մասին վէճ մըն է կը ծագի կնոջ ու ծախողին միջեւ. հայհուհներ կը փոխանակուին, վրայ կը հասնի յաճատորդութիւն սիրանարը, նաև ասոր մէկ բարեկամուհին, իր սիրահարին հետ: Աղմուկը կը մեծնայ, ահոխ մը, ինչպէս որ միշտ կը պատահի, կը խոնի վայրը, ու ահռելի գոռում գոչումներով եւրոպացի ու բնիկ՝ իշարու կը խառնուին: Աստիկան մը կը հասնի, կը փորձէ վերջ գնել խառնակութեան. խուժանը վրան կը յարձակի, կը քարկոծէ, կը վիրաւորէ զանի. արդէն շրջահարի դնդակներ պարպուած էին դիմացի գինետան մը վարձկուէն: Այս ազմուկին վրայ էսսանմէ՛հ Մուսս ստանապետը, 30 տարու երիտասարդ մը, կը վազէ գէպ 'ի վայրը, մեծ կորովով մը կը ճեղքէ գրգռուած խուժանը, կը փորձէ ձերբակալելու շրջահարը պարպող մարդը, երբ ահռելի խուճաց մը տիրեց: Փողոցը կը վխտայ մարդիկներով, որանք ա'լ չ'էին դիտեր թէ ինչ կ'անցնէր կը գառնար: Տասնապետը խեղդուեցաւ մարդկային ալիքի մը մէջ, զարնուած, զինաթափ. ղէնքը ձեռքէն առնուած, փողին վրայ ընդունեց հարուած մը, որ ղինք անշունչ գետին փռեց:

Խուճապի նշանը արուած էր. ամեն կողմէն լրտեսներ վազեցին եկան, բայց խուժանը, որ զիրար հրելով գիտակի մը շուրջը, արեան մէջ կը քալէր, ահռելի կերպով գրգռուած էր:

Սակայն կարելի կ'ըլլայ ընել քանի մը ձերբակալումներ, թէ և ո'չ առանց մեծ գժուարութեան:

Ապսխարահեման էֆ. գրամի մաւուրը անմիջապէս հասաւ ոճրին վայրը, շատ մը լրտես ստիկանաց հետ: Ասանք կից փողոցները պահեցին, արգիլելու համար մուտքը, որովհետեւ, հեռաւոր թաղերէ անդամ, քաղքին ամեն կողմերէն խուռն բազմութիւն մը կը հասնէր հոն. հրաշք է որ առելի թիւով վիրաւորեալներ չ'ինկան:

Մամուրը լուր ղրկեց անմիջապէս

կառավարչին, Բաղֆէի շէքին, եւ Ի-
տալիանի հիւպատոսին, որոնք եկան
հան:

Կնուածիւն բացուեցաւ, խուզար-
կուեցաւ այս ցաւալի գէպըին շարժա-
ւիթն եղող կնոջ առնը, ուր գտնուե-
ցաւ գծրազդ առանապետին սաւինը,
անկազմի տակ, ինչպէս նաև շշահարը
և արիւնաներկ գանակ մը:

Դիակը, որ փոշոջը փռուած թող-
ուած էր մինչև այն ատեն, փոխադրու-
եցաւ կառավարական հիւանդանոցը,
բժշկականօրէն հաստատուելու համար:

Բնական էր որ ամբողջ քաղաքը
բռնուէր ահաւ գողէ. փողոցէ փողոց
ժաղկըղ աքառ շարձուինքեր սողին
անդին պռուալով, բայց կրողակներու
ապակիները կտորտեցին: Մասնաւոր
կռիւներ ալ տեղի ունեցան հոս և հան,
նոր վիրաւորուածներ ալ եղան, թէ և
թեթև. վերջապէս, պահ մը տիրեց
ընդհ. ջարդի սոսկում մը, որ, բարե-
բաղդարար, շուտով փարատուեցաւ,
չնորհիւ կառավարութեան ձեռք առած
ազգու միջոցներուն:

ԱՐՏԱՔԻՆ

— Բրիւկէր Ֆրիկաոյի թղթակցի մը
հետ տեսակցութեան մը մէջ, Պօէրնե-
րու դիտումներուն նկատմամբ կրկնա-
ծ է իր յայտարարութիւնը թէ՛ Հանրա-
պետականք իրենց զէնքերը վար պիտի
գնեն այն ատեն միայն, երբ որ ամբող-
ջովին վերստանան իրենց ազատու-
թիւնը:

ԴԵՂԱՐԱՆ ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը
վերջերս աւելի ճոխացուցած ենք բե-
րել աւալով եւրոպական ամեն տեսակ

ընտիր գեղօրայք, սրեսիւսիքներ եւ
հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով
ըլլալ գեղեցուն խնամեալ եւ արագ
պատրաստութեան ու գիներու չափա-
ւորութեան մասին:

Գեղարանս կը յաճախեն Հայ եւ
օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս
նաև հանրութեան ծանօթ վշայեալ ու
փորձ մանկաբարձներ:

ԳԷՈՐԳ ԹՕՂԱԹԵԱՆ

ԿԱՆԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երեւելի հայ տունեւուն
ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, ևն:


Յանձնարարութիւնք խնամով կը
կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ՀԱՄԲՆԸՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ


ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Սրանց, կանանց ու մանկանց ա-
մեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու
պատրաստ, կը վաճառէ. ապրանք-
ները մաքուր, տակուն ու ձե ուղղ. կը
մրցի ք լոր օտար վաճառատանց հետ,
գիներէն աժանութեան կողմէն:



ՆՈՐ ՀՍՅԿԱՍԱՆ ՃՆՇԱՐԱՆ

Մեկշիյն Հայկ. Մեծ Սրճարանին ետին



Յաճախորդները պիտի գտնեն զով
ու օգուտ տեղ մը, մաքուր սպասար-
կութիւն, համեղ ու պէս պէս կերա-
կուրներ, քաղցրաւենիք, միրգեր, բմ-
պելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի կանխիկ վճարումով ու գոհացու-
ցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի
տեսնէք նոր ճաշարանին առաւելու
թիւնը:

Թերսու մանուկի յանձնում պահումն ստանալիս Գահիրէի «Արշալոյս» կես շաբաթաթերթին 7 Օգոստոսի րիւր:

Նոյն րեթիկն մեզ Աղեխանը յաւանդեալ թաղական նահանգի ինքնապետ Պ. Լեւոն Մկրտչեանի ստորագրած Սահմանագրութեան պատգամները տեսնելու յոյուածին (1) պատասխանեմ ե ներկայ Յաւանդումը:

Այս Յաւանդումին հրատարակութիւնը կարելի չէր յաջորդ շարքումն յետագիւր, որով ընդամենը հասնումն արժանաւորութիւնը զոր սուրբ րեթիկն այդ յոյուածով օրինակներ յարկիցն հասցիցն ուղղութեամբ նախախնայները, ներհարստ, ներկայ րիւր պատասխանելիս ինչ մ'ուշ հրատարակեմ, Յաւանդումին հետ միասին ցրտելու համար:

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՂԵՔՍԱՆ ԴՐՈՅ ՄԷՉ

Հանրային խնդիրներու վիճարանութեանց մէջ լրջութեան և պարկեշտութեան ճամբէն միշտ շեղելով անձնականութիւններով զբաղելու, և կիրքներու անձնատուր եղած մէկին միւսին, նոյն իսկ հաւաքականութեանց նկատմամբ նախատական և լրջ ընդհանրութիւններու գործածելու բնական յոռի սեպակութիւն մը գրողներէ ոմանց գերագոյն սաղանդը կը կաշմէ գծարար:

Հրատարակչային վիճարանութեան նիւթ եղած ո և է ինքզնու մը վրայ լսուելու իրաւունքը ամեն ոք կը վայելէ անշուշտ, բայց անհրաժեշտ է որ այդ անկապակի իրաւունքը ի գործ գրուի աղիւր և կիրթ եղանակով մը, փոխանակ հայհոյութիւններու փաստեր գնելով հանրութեան առջև, փոխանակ անապայտեայ և անճիշտ հաստատութեանց՝ իրողութիւնները անկեղծօրէն և հաւատարմօրէն ներկայացնելով հասարակաց դատաստանին:

Մենք կարող չենք, անտարակոյս, զբաղել թաղ. Խորհրդոյ քարտուղար Պ. Լեւոն Մկրտչեանի Արշալոյսի 7 Օգոստոսի թուոյն մէջ Սահմանագրութեան պաշտպաններուն ուղղած կէս պաշտօնական յօդուածին այն պարբերութիւններով որոնց ծնունդ տուած է այն տխուր տաղանդը զոր դատասպարտեցինք քիչ մը վերջը բայց այս պատճառաւ, չպիտի հրաժարինք ընտանիք իրաւունքէն, իբրև տեղոյս հասարակութեան մէկ անդամը, մեր կարծիքը յայտնելու յիշեալ յօդուածին այն կէտերուն վրայ միայն որք ուղղակի կը վերաբերին սկզբունքի կարեւոր խնդրոյ մը որ լրագրական ասպարէզը ելած է մօտ ժամանակէ մ'ի վեր:

Հետեապէս, բացարձակօրէն խորշկով անձնականութիւններէ, որք սկզբունքի և օրէնքի հարցերու մէջ ո և իցէ կշիռ չունին, նկատողութեան պիտի առնենք միայն յառաջ բերուած այն հաստատութիւնները որք վիճարանութեան առարկայ եղած բուն հարցին կը պատկանին:

Յօդուածագիրը կրէ թէ:

1. Սահմանագրութիւնը բունքարուած չէ Աղեխանը ինչ մէջ:

2. Թաղական Խորհուրդը հակասահմանագրական կազմութիւն չունի:

(1) Այդ յոյուածը պարունակող րեթիկն խոշոր ծար մ'անբաժն, այսօր կես օրէն վերջը, արիւն ֆրիկն մեծ երիտասարդ մը կը ցրտէր փողոցները պոսալով. 2 րի' ե, 2 րի', Թաղ. նահանգի ինքնապետը...

3. Ա. Արդի Թաղ. Խորհուրդը նոր մարմին մը չէ, հաստատուած 1899ին Սահմանագրութեան ընդունումով մարմինը որոն հրատարակուած փոքրամասնութեան տեղ երկու օժանդակ անդամներ առնուած են: Գ. Հետեալապէս, Սահմանագրութեան 56րդ յօդուածի համաձայն Թաղ. Խորհուրդի պաշտօնը կը լրանայ 1903ի Մայիսին:

4. Թաղ. Խորհուրդը իրապէս ժողովրդապետ է ու սահմանագրական, ինչպէս էր կազմութեանը նախնայէ իր հոգիով:

Ահա այս շրջան հաստատութիւնները Սահմանագրութեան պաշտպաններուն առջև գնելով, Թաղ. Խորհուրդոյ քարտուղարը կը հրատարակէ զանոնք հրատարակուած իրենց պահանջներէն յիշեալ աղբյւրին օրինաց գործադրութեան մասին, նկատելով որ անոնց նպատակը Սահմանագրութեան գործարարը չէ այլ հասարակութիւնը խաբել և գրգռել եւն. և կաւելցունէ թէ իրենք ամենէր Առաջնորդ, Ժողովուրդ, Թաղական Խորհուրդ այս դիտարկներուն տեղեակ են:

Մենք պատասխանները:

1. Եթէ կայ հայաւանակ այլապէս մէջ տեղ մը որ գերազանցապէս բունքարուած ըլլայ Սահմանագրութիւնը, այդ ալ Աղեխանը իրեն է, որ ըրովհետեւ, ինչպէս ամեն ոք գիտէ, հոն միայն կայ Թաղ. Խորհուրդ մը որ անկեղծ նկատելով ինքզնինքը Աղբյւրին Գաւառական Վարչութեան, ամեն տեսակի և աստիճանի աղբյւրին գործերը կը վճռէ և կը գործարարէ բացարձակ միակշորական գրութեամբ, և ո և իցէ գերագոյն մարմնոյ մը հանդէպ իւր համարատուութեան պարտականութիւնը չի կատարեր:

Այսպիսի բաւական է և աւելի՛ Սահմանագրութեան գուրս մնալու համար:

2

Թաղ. Խորհուրդը սահմանագրական կազմութիւն չունի, որովհետեւ, ինչպէս Սահմանագրութեան 56րդ յօդուածը կը պահանջէ, թաղին ժողովրդեան կողմէն ընտրուած չէ:

Թաղ. Խորհուրդ մը որ իւր Ասեմապետին կողմէն ընտրուած է (ինչ որ ալ ըլլան այդ ընտրութեան շարժառիթներն ու պարագաները եւ ընտրողին անվիճելի արժանիքները), և առժամանայ է միանգամայն, Սահմանագրութեան օրինաւոր ճանցած Թաղ. Խորհուրդը չէ:

Եթէ այսպէս ըլլալը Թաղ. Խորհուրդը ինքը կը խոստովանի, յիշեալ Խորհուրդին ծանօթ քարտուղարը չէ որ կրնայ սուտի հանել իրողութիւնը:

Ահաւասիկ պայտօյցը, զոր կարտագրեմք առ առ Թաղ. Խորհուրդ մէկ պաշտօնական նամակէն (յիշեալ Խորհուրդ քարտուղար Պ. Լեւոն Մկրտչեանի շարժառիթեամբ և գործը), որ կը կրէ 921 Յունուար 1900 թուականը, 16 թիւը և Վ.Ս.Մ. փոխ-Առնապետ պէյին ստորագրութիւնը:

«Տեղոյս հայ հասարակութեան մշտական Ասեմապետ Վ.Ս.Մ. Պօղոս Բաշայի կողմէ կարգուած Թաղ. Խորհուրդը ամեն լիազօր իրաւունք կը վայելէ նորին Վաւերութեան կողմէ ինքզնինքը յարգելի ընծայելու համար և իր առժամանայ ճանկանմանը ո և է կէրպով արգելք չի հանդիսանար հանրային գործերը զօրաւոր ձեռքով մը վարելու»:

3

Թաղ. Խորհուրդոյ քարտուղարին երրորդ զլխաւոր հաստատութեան երկու մասերուն ալ վաւերական հերքումը մեր վերոյիշեալ երկրորդ պատասխանին անխուսափելի և անհրաժեշտ հետեւութեան մէջն է:

4

Այս չորրորդ հաստատութեան զլխաւոր իմաստն ալ երկրորդին հետ կը շփոթուի: Զանազանութիւնը այս է թէ Թաղ. Խորհուրդը իր հոգիով ժողովրդապետ է եղեր. չա՛տ լաւ, կրնա գունդիք առանց փակամակութեան. բայց թէ սահմանագրական մի չնգամայն... ասոր հաստատական ազգայնոյցը չէ՛ որ ունի նք: Իսկ, ինչպէս իր կազմութեամբն ալ ժողովրդապետ կրնայ ըլլալ ո և իցէ Խորհուրդ մը, այդ՝ կարող չենք ըմբռնել:

Առանց հինցած և ամենուն ծանօթ զանազան աւելի կամ քիչ կարեւոր դէպքերու մանրամասնութեանց մէջ մտնելու, և ուղիղը, սխալը, բարեփոխուածը և խեղափոխուածը միտուելու և ստիկելու, առանց մանաւանդ պատգամանման հաստատութիւններ արձանագրելու մեր անձնական հեղինակութեան, հանամ անօթ անվիճելի իրողութիւններու, և ամենուն, նոյն իսկ ընդգրկմասսօ յօդուածագրին համար, ան ընդհանրելի վաւերագրի մը զօրութեամբ միայն համարձակեցանք մի անգամ ընդ միշտ չբացնել խնդրոյ նիւթ եղած յօդուածին պարունակութեան հիմքը:

Թէ Սահմանագրութիւնը պաշտպաններու պէտք չունի, կարելի չէ այլ ևս ըսել այդ բանը: Բայց թէ ասանք Սահմանագրութեան գործադրութիւնը պահանջելով հասարակութիւնը խաբելու, զրգուելու և պղտոր ջուրի մէջ ձուկ ուսալու նպատակ ունին, ինչպէս կրնէ Թաղական Խորհուրդ քարտուղարը, այսպիսի տղեկ և անչնորհ կասկած մը այնքան անհեթեթ է որ, հակառակ պարագային մէջ, այսինքն Սահմանագրութեան բունքարման մէջ արդեօք պէտք էր յուսալ աղբին շահերուն ապահովութիւնը:

Շատ հնարաբարական է գիտնալ թէ արդեօք իրաւ Գեր. Ս. Առաջնորդը և Պատ. Թաղ. Խորհուրդը արտօնած են երբեք յիշեալ Խորհուրդին քարտուղարը, իրենց անունով և հրատարակուած, նախատեալ Աղեխանը ինչ հասարակութեան բացարձակ մեծամասնութիւնը որ սրբատանց կը փափաքի աղբյւրին օրինաց գործադրութիւնը տեսնել վերջապէս, և որուն մէկ պատկառելի մասը վերջերս յատուկ հանրագրով, Եղիպտոսի Աղբ. Գաւառական Վարչութեան Ս. Նախագահին խնդրած է Սահմանագրութեան ընդ հուպ գործադրութիւնը:

Գրաւ կը գնենք որ այդպիսի արտօնութիւն մը ո՛չ Ս. Առաջնորդը, ո՛չ Պատ. Թաղ. Խորհուրդականները կրնն տուած ըլլալ յիշեալին: Եթէ անոնք ժողովրդին ուղղած նախատեալներն անտարբեր կը թողուն Առաջնորդ և Թաղ. Խորհուրդ, ինչ որ անհաւ ստալի է մեզ, նոյնքան անտարբեր կրնան մնալ արդեօք այս վերջինները, երբ այդ նախատեալներուն պատասխանատուութիւնը իրենց վերաբերել կը ժպրէ իրենց ուղղակի ստորագրաս պաշտօնեայ մը:

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՂԵՔՍԱՆ ՄԷ.

Աղեխանը ինչ, 9 Օգոստոս 1901

144

Handwritten text in a cursive script, likely a historical document or manuscript. The text is arranged in several lines and appears to be a formal or legal document.

Handwritten text, possibly a signature or a specific heading within the document.

Handwritten text, continuing the narrative or legal content of the document. The script is consistent with the rest of the page.

Handwritten text, further detailing the content of the document. The lines are closely spaced and written in a consistent hand.

Handwritten text, concluding the main body of the document. The text is clear and legible, despite the age of the paper.